

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՄԱՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում *է*.

- 1) եղ-րերգ, ափ-ափ, չ-նք, լայն- կրան
- 2) դող-րոցք, Հրագղանհ-կ, չ-ի, ան-
- 3) ամենա-ական, քրիստոն-ություն, երբևից-, ինչև-
- 4) հն-աբան, պատն-շ, չ-ինք, առ- ջաթել

2 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ղ*.

- 1) ար-ուկ, Վր-անես, անհողորդ-, եր-վյալ
- 2) հար-արել, նշ-արենի, ար-արև, զար-ուղի
- 3) Ալվար-, գր-նակ, անդա-րում, միջնաբեր-
- 4) կորնթար-, Բաղդա-, հար-աշաղախ, լաջվար-

3 Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ի*.

- 1) բրար-ն, հետ-տն, մեղալ-ն, տրիլ-ն
- 2) Նապոլ-ն, ռադ-, ակորդ-ն, արդ-ք
- 3) ամբ-ն, թ-րեն, միլ-ն, Տոկ-
- 4) լեզ-ն, Բյուզանդ-ն, գիլ-տին, մարմար-ն

4 Ո՞ր շարքում ուղղագրական սխալ կա.

- 1) արգավանդ, գեղգեղալ, գանգրահեր, գորգավաճառ
- 2) Գ-ևորգ, եղեգնուտ, եգիպտական, իգական
- 3) ազևոր, դեգերել, հոգեբույժ, շրջագայել
- 4) նվագարկիչ, թանգարան, պատարաքիչ, գրգամոլ

5 Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) **քարակ** – որսկան շուն, **որձաքար** - ամուր քար
- 2) **հեթանոսական** - կռապաշտությանը վերաբերող, **արամբի** - սև ձի
- 3) **երկարամիտ** - երկար վիզ ունեցող, **իմովսանն** - իմ կարողացածի չափ
- 4) **հեյլեն** - հույների հին անունը, **սրդողել** - հոգեպես անհանգստանալ

6 Ո՞ր շարքի բոլոր բառակապակցություններում փոխաբերական իմաստով գործածված բառ կա:

- 1) մեղքերի մրրիկ, խարխուլ մակույկ, հույսի ճրագ
- 2) բոցե վարսեր, լույս աչքեր, փշրված անուրջներ
- 3) ձյունագես լեռներ, անճարտար շինարար, նախասկզբնական արարչություն
- 4) թեթև վիրավորանք, գոհարազարդ մատանի, խոտոր ճանապարհ

7

**Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:**

- 1) դրացի, հարևան, կողակից, դրկից
- 2) մարմնեղ, թիկնեղ, հաղթանդամ, պարթևահասակ
- 3) ունևոր, մեծատուն, հարուստ, գծուծ
- 4) աստանդական, ասպնջական, հյուրընկալ, վանատուր

8

**Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոդակապով:**

- 1) բարեկիրթ, մականուն, մակաբույծ, թերակղզի
- 2) անավարտ, հետևաբար, կիսանդրի, հանդիպակաց
- 3) հեռավոր, տարագիր, շաքարավազ, արագավազ
- 4) ժպտադեմ, բարեկամ, հուսահատ, գահավիժել

9

**Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ:**

- 1) եզրագիծ, զարդատուփ, միլիոնատեր, զուգերգ
- 2) երկրամաս, հետագիծ, հացաբույս, տավղահար
- 3) հոգեբույժ, դրամատուն, շարասյուն, եզրակար
- 4) ենթաճյուղ, աստղաբույլ, նոթատետր, հողմացույց

10

**Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ներքին հոլովման:**

- 1) վանահայր, մայր, սուրանկյուն, ազգանուն
- 2) նախահայր, ուրախություն, հավասարում, գայլաշուն
- 3) եղբայր, գարուն, դեղատուն, բազմանկյուն
- 4) ցասում, հուշասյուն, ծանրություն, մականուն

11

**Ո՞ր նախադասության մեջ ստացական հոդ կա:**

- 1) Վերջերս հանդիպեցի իմ հին ծանոթին:
- 2) Ուսանողներդ խորհրդանշում եք երկրի ապագան:
- 3) Խայամն ասավ իր սիրուհուն. «Ոտդ զգո՛ւյշ դիր հողին»...
- 4) Աշխարհումս իմն դուն իս:

12

**Տրված ածականներից քանի՞սը համեմատության աստիճան չունեն.**

անտանելի, թանկ, ճաղատ, առատաձեռն, սովորական, մետաքսե, հղի, նրբագաց, համր, բոկոտն:

- 1) հինգը
- 2) վեցը
- 3) երեքը
- 4) չորսը

13

**Ո՞ր շարքում տրված տեսակին չպատկանող դերանուն կա:**

- 1) ողջը, այնինչ, բոլորը, ամեն ոք - *որոշյալ*
- 2) ինչքան, որտեղ, որ, ինչպես - *հարաբերական*
- 3) այսքան, այսպես, միևնույն, մյուս - *ցուցական*
- 4) ուրիշ, այլ, որոշ, երբևէ - *անորոշ*

14

**Տրվածը ինչպիսի՞ նախադասություն է:**

*Սև գիշե՛ր, և՛ հուշե՛ր, և՛ խոհե՛ր անհամար,  
Մոռացված երազներ, շուշաններ թառամած:*

- 1) բայական անդեմ
- 2) անենթակա
- 3) թերի
- 4) անվանական անդեմ

15

**Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Նա պատրաստ էր հորից ներում խնդրելու, բայց հայրը խուսափում էր հանդիպումից:
- 2) Նա ամբողջ հարստությունը կտակել էր ոչ թե զավակների, այլ կնոջ վրա:
- 3) Նա համբերությամբ սպասում էր ամբողջ եզերող պարսպի երկաթյա դարպասներից մեկի բացվելուն:
- 4) Նա անտեղյակ էր իր դեմ նյութվող դավերին:

16

**Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*Երկար ..... հմայված, ու ..... լեռը կարողում է ....., ցանկանում շոյել ..... գլուխս:*

(նայել, թվալ, միտք, ճերմակել)

- 1) պիտի նայեմ, կթվար, մտքերս, ճերմակ
- 2) նայում եմ, թվում է, մտքերս, ճերմակող
- 3) նայել եմ, թվացել է, մտքում, ճերմակած
- 4) կնայեմ, կթվա, ճերմակ, մտքերով

17

**Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված ենթակա կա:**

- 1) Կածանները նրանց անձանոթ են ու երկյուղալի. չգիտես ինչ ձորեր են մտնում:
- 2) Մեզ հաճելի է դիտել, թե ինչպես ջրածտերը թռչում են փրփուրի վրայով:
- 3) Խրճիթն իր հիմնվելու օրից այդքան ուրախություն երբեք չէր տեսել:
- 4) Աշխատանքի այդ խաղաղ օրերին այնպես էր երևում, թե սարերի ետևում ընկած գյուղի մասին քաղաքում ոչ ոք չգիտի:

18

**Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

*Մեծահամբավ ցլամարտիկի տապալվելուն պես կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:*

- 1) Հենց որ մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:
- 2) Կրկեսի անտարբեր ավազը կխմի մեծահամբավ ցլամարտիկի արյունը, երբ նա տապալվի:
- 3) Եթե մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:
- 4) Երբ որ մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:

19

**Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:**

*-Ի՞նչ ուժով պիտի հաղթես արաբներին, Մարգպետունի՛ իշխան. մենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունենք,- երկյուղած հարցրեց թագուհին:*

- 1) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգպետունի իշխանին, թե ինքը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 2) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգպետունի իշխանին, թե իրենք ինչ ուժով պիտի հաղթեն արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 3) Թագուհին երկյուղած հարցրեց, թե Մարգպետունի իշխանը ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. նրանք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:
- 4) Թագուհին երկյուղած հարցրեց Մարգպետունի իշխանին, թե նա ինչ ուժով պիտի հաղթի արաբներին. իրենք կղզում ընդամենը հարյուր զինվոր ունեն:

20

**Ո՞ր նախադասության մեջ միջակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Ես դուրս եմ գալիս մոտենում Մխիթարի քաջ սպարապետի գերեզմանին պառկում դեղնականաչ խոտերին:
- 2) Նրա բոլոր արարքները որքան էլ անհետաքրքիր ու ձանձրալի գրավել էին ողջ դահլիճի ուշադրությունը զարմացրել բոլորին:
- 3) Մարիամը այդպես էր օրիորդի անունը ամոթից շիկնել էր:
- 4) Մնացինք դեմուղեմ կանգնած ես ծառի տակ էի արջը քիչ հեռու:

21

**Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Լազարյան ճեմարանն իր գոյության ընթացքում պահպանել է իր հայկական դիմագիծը. հայերենով դասավանդվել են մի շարք հայագիտական առարկաներ, ուսուցիչներից և դասախոսներից շատերը եղել են հայեր: Տարբեր ժամանակներում ճեմարանում դասավանդել են Հ. Ալամդարյանը, Մ. Նալբանդյանը, Ս. Շահագիզը, այստեղ են սովորել ապագա նշանավոր գրողներ Ռ. Պատկանյանը, Գ. Դողդիսյանը, Վ. Տերյանը, արվեստի և գիտության նշանավոր այլ գործիչներ:
2. Ճեմարանում ուսուցումը հիմնականում տարվել է ռուսերենով, սակայն հանրակրթական առարկաներին զուգահեռ դասավանդվել են հայերեն, լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, նաև մի շարք արևելյան լեզուներ՝ պարսկերեն, արաբերեն, թուրքերեն: Խորհրդային տարիներին այս ճեմարանի հիմքի վրա ստեղծվում է Մոսկվայի արևելագիտության ինստիտուտը:
3. 1921 թվականից Լազարյան ճեմարանի շենքը ծառայել է իբրև Խորհրդային Հայաստանի մշակույթի տուն: Ներկայումս այն Ռուսաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատունն է:
4. Լազարյան ճեմարանը հիմնադրվել է Մոսկվայում 1815 թվականին մեծահարուստ Լազարյանների նախաձեռնությամբ և միջոցներով: Այստեղ ընդունվում էին տարբեր ազգերի 10-14 տարեկան երեխաներ, հիմնականում՝ հայեր և ռուսներ:

- 1) 3, 1, 4, 2
- 2) 3, 2, 1, 4
- 3) 4, 2, 3, 1
- 4) 4, 2, 1, 3

22

**Ո՞ւմ մահն է Մովսես Խորենացին ողբում՝ գրելով.**

*«Ո՞ւր է այն քաղցր աչքերի հանդարտությունը ուղիղների համար և ահավորությունը շեղվածների համար. ո՞ւր է այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ւր է այն բարյացակամ սիրտը, որ հետևողներ էր գրավում...»:*

- 1) Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի
- 2) Վռամշապուհ թագավորի և Վարդան Մամիկոնյանի
- 3) Հովսեփի Պաղնացու և Հովհան Եկեղեցիացու
- 4) Կորյունի և Դավիթ Անհաղթի

23

**Գրիգոր Նարեկացու ո՞ր տաղից է տրված հատվածը:**

*Աչքն ծովի ծով ծիծաղախիտ  
Ծառալանայր յառաւօտուն,  
Երկու փայլակնաձև արեգական նման.  
Շողնի ժմին իջեալ յառաւօտէ լոյս:*

- 1) «Մեղեդի ծննդյան»
- 2) «Տաղ Վարդավառի»
- 3) «Տաղ Հայտնության»
- 4) «Տաղ Հարության»

24

**Ո՞րն էր Դավթի և Փոքր Սիերի մենամարտի պատճառը «Մասնա ծռեր» էպոսում («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր):**

- 1) Սիերը Դավթից պահանջում է նրա նժույգը և մերժում ստանում:
- 2) Սիերը, տեսնելով այդ աժդահա մարդուն, ուզում է իր ուժը փորձել՝ նրա հետ գոտեմարտելով:
- 3) Սիերին դուր չի գալիս, որ իրեն անծանոթ այդ ձիավորը ճանապարհին իրեն չի զիջում:
- 4) Սիերը զայրանում է, որ մի թուխմորուս մարդ իր ձիու վրա մի երիտասարդ աղջիկ է տանում:

25

**Հայրեններից ո՞րն է կառուցված երկխոսության սկզբունքով:**

- 1) «Երեկ ցորեկով բարով»
- 2) «Աղուո՛ր, քեզ բան մի կասեմ»
- 3) «Ես աչք ու դու լոյս, հոգի՛»
- 4) «Եկին ու խապար բերին»

26

**Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» պատմավեպում Աշոտ Բռնավորն իր տանը հյուրնկալվածներից ո՞ւմ էր ցանկանում դավադրաբար կալանել, ինչը խափանվում է Գևորգ Մարգպետունու կողմից:**

- 1) Աբաս արքաեղբորը
- 2) Հովհաննես կաթողիկոսին
- 3) Աշոտ Երկաթին
- 4) Սահակ Սևադային

27

**Որտե՞ղ են կատարվում Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադի գործողությունները:**

- 1) Ջավախքում
- 2) Գուգարքում
- 3) Լոռիում
- 4) Սյունիքում

**Խոսքերից ո՞րը Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրամայի որ հերոսինն է:**

- ա. «Իմ կյանքիս գորշ երկնքում դուն ես եղեր  
ինձի համար լույսի աստղը, ապրելու  
ինաստը, առանց այդ լույսին, առանց այդ  
մխիթարության ես չգիտեմ՝ ինչու էի  
ապրելու»:
- բ. «Ի՞նչ կ'ուզես, կին, ի՞նչ կ'ուզես դուն  
ինձնե: Ամբողջ կյանքիս կեսը տառապանք  
տվիր ինձի, տառապանք ու դառնություն,  
ջարդեցիր կյանքս, խորտակեցիր երիտա-  
սարդությունս, հիմա ալ մոխի՞րը քրքրել  
կ'ուզես»:

1. Արեղա
2. Իշխանուհի
3. Վանահայր
4. Սեդա

- 1) ա-3, բ-1
- 2) ա-2, բ-3
- 3) ա-1, բ-3
- 4) ա-2, բ-1

**Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

*Ու էլ ամեն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.  
Պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ ա՛չքս է հեռուն...*

- 1) «Դեպի լյառը Մասիս»
- 2) «Տաղ անձնական»
- 3) «Հարդագողի ճամփորդները»
- 4) «Հեռացումի խոսքեր»

**Հատվածներից ո՞րը Համո Սահյանի որ բանաստեղծությունից է:**

- ա. Ծանր նստել է և ամեն մեկին  
Իրեն արժանի պատիվն է տալիս.  
Վայրի աղավուն՝ հանճարը վայրի,  
Մոլորված ամպին իր քիվն է տալիս,  
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:
- բ. Կախվել է ժայռը անդունդի վրա  
Եվ դարեր այդպես կախված է մնում,  
Ջրերի մեջ են ոտքերը նրա,  
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:
- գ. Արևոտ մի սար եմ հիշում՝  
Ճակատին ձյունի պատառիկ,  
Սարն ի վար բարակ մի առու՝  
Շուրթերին հայրեն ու տաղիկ...
- դ. Փայտահատը հին երգն էր կրկնում  
Եվ տաք սողոցն իր յուղում էր կրկին,  
Թեղին անտառքեր ականջ էր դնում  
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:

1. «Մասրենի»
2. «Անունդ տալիս»
3. «Անտառում»
4. «Քարափր»

- 1) ա-4, բ-1, գ-3, դ-2
- 2) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 3) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 4) ա-1, բ-4, գ-2, դ-3



31

Տրված բանաստեղծական հատվածներից ո՞րը որ հեղինակի ստեղծագործությունից է:

1. Ծաղիկներին՝ դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,  
Մանուկներին վառ-խլրտուն ասում եմ ես՝ մնաք բարով:
2. Եվ հառաչեցին լեռները ցավից.  
Անեծք ժայթքեցին հրաբուխներով,  
Դարձան անդունդներ ու խորանալով  
Այն սեզ լեռների տանջանքը լացին...
3. Երբ էս հին աշխարհը մտա ես տաղով, սագով-ամանչով,  
- Ի՞նչ պիտի անե աշխարհում էս անմիտ-անճարը,- ասին:
4. Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի.  
Եվ համրագին գիրքը ձեռքես կ'իյնա վար...

- ա. Մ. Մեծարենց
- բ. Վ. Տերյան
- գ. Ե. Չարենց
- դ. Հ. Շիրազ

- 1) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
- 2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
- 3) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
- 4) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ

32

Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Ամե՛ն ինչից շատ, ամե՛ն ինչից վեր  
Սիրում է կյանքում նա իր... արքայը:  
Աթռն է սիրում  
Ու նրան տիրում.  
Ցանկացած գնով ելնում է նա վեր,  
Փորձում է թռչել նա առանց թևեր,  
Անվերջ սողալով առաջ է գնում...*

- 1) «Վարք մեծաց»
- 2) «Եվ այր մի՛ Մաշտոց անուն»
- 3) «Մարդ էլ կա, մարդ էլ»
- 4) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»

33

Ընդգծվածներից քանի՞սն են մակդիր.

*հոգնած* ամպեր, *կապույտ* մրրիկ, *սև* կրակ, *կարմիր* ծաղիկ, *խաբույսաշ* քամի, *թռչող* կյանք, *զծված* քամի:

34

Տրվածներից քանիստ՞ն են բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչները գրվում մեծատառով.

ԱՆՆԱ-ՄԱՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ,  
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, ՏՐԴԱՏ ԱՌԱՋԻՆ, ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ,  
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳԱՇՏ:

35

Բառերից քանի՞սն են *հոդակապով*.

աղեկտուր, առևտուր, բանիմաց, ուղեվճար, կիսաքանդ, ծաղկաման, հաղթանդամ,  
ամպամած, կղզյակ, գինեգործ:

36

**Տրված շարքում դերանվան քանի՞ տեսակ կա.**

ինքը, սա, ինչքա՞ն, որոնք, քանի՞, մյուս, այստեղ, ուրիշ, ոմն, իրար, ինչու, այլ:

37

**Տրվածներից քանի՞սն են անորոշ դերբայ.**

թովռալ, կերել, խաղացել, իջել, մտմտալ, ելնել, անհանգստացրել, զարմացել, ջղայնանալ, թշնամացել, գտել, դիպել:

38

**Տրված հատվածում գոյականական անդամի քանի՞ լրացում կա:**

Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,  
Ու խնդացին լուսավոր մեր աչքերին,  
Բուք հեզնեցին մեր կարոտները հրկեզ  
Ու հեռացան: Ու ոչ մի լուր չբերին:

39

**Նշել թվերը՝ ըստ տողերի ճիշտ հաջորդականության:**

1. Նիրի էին մտել ծաղկունքը բուրյան՝ ադամանդներով, շքեղ գինդերով
2. Մերթ ամաչելով պահվում էր ամպում և մերթ թրթռուն փայլում էր պայծառ
3. Ծիածանաթև հավքերը իրար գուրգուրում էին քնքուշ մրմունջով
4. Եվ լուսինն ինչպես ջեննեթի մատաղ փերիի կուրծքը՝ չքնաղ, լուսավառ

40

**Նշել այն բառերի համարները, որոնցում հնչյունափոխություն կա.**

1. ճակատագիր, 2. կանխավճար, 3. կմախքանալ, 4. երկնահույս, 5. պտուտակ,
6. գանահարություն, 7. գանգահարել, 8. գուգաղիր, 9. թուլամիտ:

41

**Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:**

1. ապուշ կտրել – քար կտրել
2. մատից հոտ քաշել – սիրտը վկայել
3. կապը կտրած – թոկից փախած
4. ձեռք բռնել – մատից փուշ հանել

42

**Տրվածներից որո՞նք են պարզ բայեր (առանց բայական ածանցի).**

1. կողոպտել, 2. համարվել, 3. դնել, 4. ծեծկռտել, 5. կազմվել, 6. տրտմել, 7. բղավել,
8. նվիրվել, 9. ժպտալ:

43

**Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների շարահյուսական վերլուծության սխալ կա:**

*Երբեմն այդ մարդու հիշողության մեջ մի դեմք այնպես է մեխվում, որ տասնյակ տարիներ հետո էլ հիշում ես խորությամբ. ասես երեկ ես տեսել:*

1. **տասնյակ** – որոշիչ, **ասես** – պարզ ստորոգյալ
2. **խորությամբ** – ձևի պարագա, **երեկ** – ժամանակի պարագա
3. **երբեմն** – ժամանակի պարագա, **մարդու** – որոշիչ
4. **հիշողության մեջ** – տեղի պարագա, **դեմք** – ենթակա
5. **այնպես** – ձևի պարագա, **մեխվում է** – բաղադրյալ ստորոգյալ

44

**Նշել այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձվածները չպիտի կետադրվեն:**

1. Նա չէր տեսնում մոխրի մեջ խաղացող երեխաներին:
2. Երիտասարդի ամենամեծ երազանքը Վանա լճի անկրկնելի գեղեցկությունը նորից տեսնելն էր:
3. Յորեն տեսնելիս ճնճուկի աչքին թակարդ չի գալիս:
4. Աշտարակի գլխից մեկն ահա ձայն է տալիս քարափը բարձրացողին:
5. Բոցերի լեզուները ընդհարվելով բնության հակառակ տարրի ջրի հետ արձակում էին դիվային բրբիջներ:

45

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. Բազմակի որոշիչները բոլոր դիրքերում որոշյալից տրոհվում են բուժով:
2. Որոշիչը կարող է արտահայտվել անորոշ, հարակատար, համակատար դերբայներով:
3. Որոշիչը գոյականով արտահայտված անդամի որակը, որպիսությունը, չափը արտահայտող լրացում է:
4. Որոշիչը կարող է արտահայտվել ածականով, թվականով, գոյականով և դերանվան բոլոր տեսակներով:
5. Որոշիչը կարող է լինել հետադաս և նախադաս. հետադաս որոշիչը միշտ որոշյալից անջատվում է բուժով:
6. Ստորոգելին չի կարող ունենալ որոշիչ լրացում:

## Բ մակարդակ

46

Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

*Հեռվից խաղալով ու խայ-ալով (1) վազում էր սպիտակ ձին, քամին փռի-ացնում (2) էր բաշը, և ձին լայն կր-քով (3) ճեղքում էր լեռնային օդի այլքները: Արևը ոսկ-որել (4) էր ձիու մարմար ճակատը, արծաթած-լ (5) ասպանդակները և պողպատյա պախուր-ը (6): Թվում էր՝ գորշ ամպերի պատվանդանից պոկվել էր մարմար-նե (7) մի հեծ-լ (8) և սր-նթաց (9) արշավում էր որպես չքնաղ տեսիլք: Կապույտ քրտինքի փրփու-ը (10) նստել էր ձիու սպիտակ մորթի վրա:*

- 1) 1 – տ, 2 – ն, 3 – ծ, 4 – եվ, 5 – ույ, 6 – ձ, 7 – իո, 8 – իա, 9 – ը, 10 – ր
- 2) 1 – տ, 2 – ր, 3 – ց, 4 – և, 5 – ույ, 6 – ց, 7 – յո, 8 – յա, 9 – –, 10 – ն
- 3) 1 – տ, 2 – ն, 3 – ծ, 4 – և, 5 – ույ, 6 – ց, 7 – իո, 8 – յա, 9 – ը, 10 – ր
- 4) 1 – ք, 2 – ն, 3 – ծ, 4 – և, 5 – ու, 6 – ց, 7 – իո, 8 – յա, 9 – ը, 10 – ր

47

Ո՞ր շարքի բոլոր բառերի և բառաձևերի վերջին վանկը *չի* շեշտվում.

- 1) թանձր, վեհանձն, հարավ, խառը
- 2) նույնպես, քաղաքական, դուր գալ, տետր
- 3) որերորդ, մի խոսիլ, խոսեցի, երեխաների
- 4) սառը, մանավանդ, հարց տալ, դուստր

48

Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված.

- 1) ՔՁՁԸ – 9998
- 2) ՆՀԲ – 472
- 3) ՎՍԼԳ – 3333
- 4) ՌՊԾԸ – 1958

49

Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Ծերունու հետնորդները սրբությանը պահպանում էին նրա թողած մասունքները:
- 2) Հովարով գլխարկն անգամ երեխային արևից չէր պաշտպանում:
- 3) Համաձայն ավանդույթի՝ նրա նախնիները ծագել են վիշապներից:
- 4) Անձրևից հետո անցորդները գայթում էին և դժվարությամբ էին առաջ շարժվում:

50

Ո՞ր տարբերակում դարձվածքի սխալ բացատրություն կա:

- 1) *սրտից արյուն կաթել* – չափազանց դաժան լինել, *արդար յուղի տեղ ընդունել* – առանց կասկածելու հավատալ
- 2) *արև ծագել* – բախտավոր վիճակ ստեղծվել, *ճանապարհին մնալ* – գործը անավարտ թողնել
- 3) *օձիքը բաց չթողնել* – մեկից համառորեն պահանջել մի բան անել, *օր չանցած* – առանց ժամանակ կորցնելու
- 4) *հին դարմանը քամուն տալ* – անցած անախորժ դեպքերը հիշեցնել, *հետին միտք* – գաղտնի դիտավորություն

51

Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) մոխրագույն – *մոխիր, գույն*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ
- 2) միջնապատ – *միջին, պատ*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ
- 3) ճամփաբաժան – *ճամփա, բաժ*՝ արմատներ, *ան*՝ վերջածանց
- 4) հրագանգուր – *հուր, գանգուր*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ

52

Ո՞ր տարբերակի ընդգծված բառերն են համանուններ:

- 1) մշակութային **գանձ**– թաքցրած **գանձ**
- 2) ցորենի **հաց**– **հաց** ուտել
- 3) **անկար** ժողովուրդ – **անկար** հագուստ
- 4) **սուր** միտք– **սուր** խոսք

53

Ո՞ր նախադասության մեջ կրավորական սեռի բայ կա:

- 1) Ձիերի բազմության մեջ քուռակն իր մորն էր կորցրել և վազվզում էր ու կանչում՝ բարակ վրնջալով:
- 2) Գիքորը ուզում էր քնե՛լ, քնե՛լ, բայց լույսն արդեն բացվել էր, ու սարյակները ճովողում էին:
- 3) Ձիերից մեկի առաջ խոտ էր լցված, մյուսի առաջ՝ հարդ, երրորդը նեղվում էր քաղցից, շոգից և անսովոր միջավայրից:
- 4) Պապը փնտրեց ձեռնափայտը, շփոթվեց, չտեսավ ձեռնափայտը ոտքի մոտ դրած և ոչ էլ սպասեց՝ մենք իրեն տանք. գայթելով գնաց:

54

Ո՞ր շարքի բոլոր բայերն են ըղձական եղանակի:

- 1) հուսանք, չեմ ասի, չգան, չերգեիմ
- 2) կատարի, դառնանք, չկարդային, խնդրեմ
- 3) չխնդրեի, հուսահատվենք, խոսի, մոտեցրի
- 4) լինեմ, տեսնեի, կայինք, չխոնարհվեմ

55

Ո՞ր նախադասության մեջ *հետո-ն* մակբայ չէ:

- 1) Արածի ու չարածի համար հետո պետք չէ արդարանալ:
- 2) -Դու հետո՞ արի. զբաղված եմ հիմա,- խնդրեցի նրան:
- 3) Քեզնից հետո կանգնած մարդը տարօրինակ տեսք ուներ:
- 4) Հետո նա սկսեց պատմել իր տպավորությունների մասին:

56

Ընդգծվածներից ո՞րն է շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) **Հենց** քեզ նկատեն հակառակորդի դիրքերից իսկույն ազդանշան կտաս:
- 2) Ճակատագրական իրավիճակներում մարդու վարքագիծը անշուշտ **այլ** է լինում:
- 3) **Հենց** ի՞նձ էիր ուզում բոլորի առաջ նկատողության արժանացնել:
- 4) Խնդրի լուծման **այլ** տարբերակների քննարկման վրա այսօր ժամանակ չենք ծախսելու:

57

**Բացառական հոլովով դրված բառը նախադասության ի՞նչ անդամ է:**

*Եվ հառաչեցին լեռները ցավից,  
Անեծք ժայթքեցին հրաբուխներով:*

- 1) պատճառի պարագա
- 2) վերաբերության անուղղակի խնդիր
- 3) ներգործող անուղղակի խնդիր
- 4) անջատման անուղղակի խնդիր

58

**Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզի:**

- 1) *Հրաժեշտի պահին, որպեսզի թաքցնեն աչքերիս մեջ լճացող արցունքները, նետվեցի մորս գիրկը:*  
Հրաժեշտի պահին, աչքերիս մեջ լճացող արցունքները թաքցնելով, նետվեցի մորս գիրկը:
- 2) *Աղջիկը սեղմել էր նրբագիծ շրթունքները, որ թաքցներ դրանց հուզաթաթավ թրթիռը:*  
Աղջիկը սեղմել էր նրբագիծ շրթունքները՝ թաքցնելու համար դրանց հուզաթաթավ թրթիռը:
- 3) *Ակամա սկսում ես հաշվել այն տարիները, որ ապրել ես հարազատներից հեռու:*  
Ակամա սկսում ես հաշվել հարազատներից հեռու ապրած տարիները:
- 4) *Երբ հին արկղերի մեջ ինչ-որ գիրք էի փնտրում, հանկարծ հայտնաբերեցի կորած թղթապանակը:*  
Հին արկղերի մեջ ինչ-որ գիրք փնտրելիս հանկարծ հայտնաբերեցի կորած թղթապանակը:

59

**Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները (պաշտոններից մեկն ավելորդ է):**

- 1. Ջորավարը խորհում էր այն մասին, որ պալատում իր թշնամիները կարող էին արքայի առաջ չարախոսել իրեն:      ա. որոշիչ  
բ. վերաբերության խնդիր
- 2. Տեղ հասնելու առաջին իսկ օրից Սմբատ Բագրատունին ուշիուշով հետևում էր, թե ինչ է կատարվում մայրաքաղաքում:      գ. հանգման խնդիր
- 3. Փոքր-ինչ հետո նա դեմ առավ իրերի կույտի, որ բաղկացած էր հին փամփուշտներից, քայքայված դաշույններից, թրերից:      դ. ենթակա
- 4. Դու, որ այդպես էլ չհասկացար աշխարհի չարն ու բարին, այժմ դատապարտել ես քեզ կատարյալ մենության:      ե. բացահայտիչ

- 1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե
- 2) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
- 3) 1-ա, 2-դ, 3-բ, 4-ե
- 4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ

60

**Ո՞ր դերբայը նախադասության մեջ չի կարող կիրառվել որպես որոշիչ:**

- 1) անորոշը
- 2) ենթակայականը
- 3) հարակատարը
- 4) համակատարը

61

**Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

- 1) Երբ ձիավորն ընկավ, Արծվին նետվեց նրա վրա՝ իմանալու՝ ով էր:
- 2) Գիտեր՝ ուրիշ ճամփա չկար. միմիայն տանջանքների միջով անցնելով էր այրուձին փրկվելու:
- 3) Թուղթը գրված է, և ինչ որ գրված է՝ չի ջնջվի:
- 4) Մի պահ Ատոմը կարկամեց (անակնկալ էր ամեն ինչ) և անկարող եղավ միանգամից ըմբռնել՝ ինչ կատարվեց:

62

**Գրական ո՞ր ժանրի բնութագրումն է հետևյալը՝**

*Իրականությունը պատկերվում է այլաբանորեն, մարդկանց և անձնավորված կենդանիների, բույսերի, առարկաների միջոցով:*

- 1) պատմվածքի
- 2) պոեմի
- 3) բալլադի
- 4) առակի

63

**Ո՞ր շարքում սփյուռքահայ հեղինակ չկա:**

- 1) Վազգեն Շուշանյան, Միսաք Մեծարենց, Ռ-ազմիկ Դավոյան
- 2) Գրիգոր Զոհրապ, Նար-Դոս, Միլվա Կապուտիկյան
- 3) Սիամանթո, Հակոբ Մնձուրի, Միսաք Մեծարենց
- 4) Դանիել Վարուժան, Կոստան Զարյան, Պետրոս Դուրյան

64

**Եղիշե Չարենցի նշված ստեղծագործություններից քանի՞սն են պոեմներ.**

«Դանթեսական առասպել», «Հեռացումի խոսքեր», «Մոմա», «Գ-անգրաիեր տղան», «Դեպի լյառը Մասիս», «Հարդագողի ճամփորդները», «Ամբոխները խելագարված», «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում»:

65

**Քանի՞ բառում արմատի հնչյունափոխություն կա.**

հանգուցյալ, ժողովածու, մրցույթ, պատանեկան, սառցաշերտ, թախծախառն, լիտրուկես, վարչական, դիակիզարան, ահագնացայտ, վերստին, հայրենադարձ:

66

**Պատկերավորման–արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**

հանգավորում, բաղաձայնույթ, շրջադասություն, համեմատություն,  
փոխաբերություն, չափազանցություն:

Մոսավում է ու սիրով սարն է ելնում իմ սուսին,  
Մոսին՝ իմ սեգ հարսի պես՝  
Լուսնի ոսկե կուժն ուսին...

67

**Նշել այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծված անդամի պաշտոնը սխալ է նշված:**

1. **Քրմապետի խորհրդով** նա որդուն տարավ աստվածների դուռը:  
(*հիմունքի պարագա*)
2. **Այծյամի պես** մի աղջիկ անդադար խոսում է ու խոսում: (*ձևի պարագա*)
3. Եվ նորից խորհում է տիեզերքի **մեծության մասին**: (*ուղիղ խնդիր*)
4. Ամռան մի օր՝ **լճից վերադառնալիս**, երկու հոգի ծեծել էին նրան:  
(*ժամանակի պարագա*)
5. Աննկարագրելի է այն զգացումը, որ ստացա այդ **հայացքից**: (*անջատման խնդիր*)
6. Կարոտով նայում էր իր վաղեմի **բնակարանին**: (*հանգման խնդիր*)

68

**Համարակալված բառերից որո՞նք են իրար հականիշ.**

1. անկշռադատ, 2. խելամիտ, 3. հակիրճ, 4. նախկին, 5. համառոտ, 6. ներքուստ:

69

**Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

*Նույն վայրկյանին ներս մտան երկու մութ պատկերներ՝ գիշերային ոգիների նման լուռ, հապճեպ գրկեցին ճերմակ տեսիլն ու չքացան նրա հետ:*

1. **հապճեպ** – ձևի մակբայ, **գրկեցին** – պարզ ժամանակաձև, անցյալ կատարյալ
2. **չքացան** – ա խոնարհման բայ, սոսկածանցավոր, **հետ** – մակբայ
3. **նույն** – ցուցական դերանուն, **վայրկյանին** – գոյական, **ի** հոլովում
4. **ներս մտան** – հարադիր բայ, չեզոք սեռ, **նրա** – դերանուն, սեռական հոլով
5. **նման** – ածական, **ոգիներ** – հասարակ գոյական, **ու** արտաքին հոլովում



**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. Համադաս նախադասությունները միշտ ունենում են իրենց առանձին գլխավոր անդամները՝ ենթական և ստորոգյալը:
2. Բարդ համադասական նախադասության առաջին բաղադրիչում կարող է հարաբերյալ լինել:
3. Բարդ նախադասությունների բաղադրիչ նախադասությունները կարող են միանալ ոչ միայն շաղկապներով կամ հարաբերական դերանուններով, այլև առանց դրանց:
4. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց հետ կարող են լինել կա՛մ համադասական, կա՛մ ստորադասական հարաբերության մեջ:
5. Միևնույն բարդ նախադասության կազմում միաժամանակ չեն կարող լինել և՛ համադասությամբ, և՛ ստորադասությամբ կապվող բաղադրիչ նախադասություններ:
6. Բարդ համադասական նախադասությունները բաղկացած են համադաս նախադասություններից, որոնք միշտ միմյանց հետ կապակցվում են համադասական շաղկապներով: